
ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Վարկածը գիտական հետազոտության կարևոր օղակներից մեկն է: Փիլիսոփայական-մեթոդաբանական գրականության մեջ գիտելիքի այդ ձևը բավականին ուսումնասիրված է: Սակայն ուսումնասիրությունները, հատկապես ռուսալեզու գրականության մեջ, հիմնականում ընդգրկում են բնագիտական գիտելիքի ոլորտը և ավելի քիչ են անդրադառնում հասարակական-հումանիտար գիտելիքին, գիտելիքի այդ ձևի յուրահատկությունների բացահայտմանը:

Պատմականորեն առաջիններից մեկը հասարակական-հումանիտար գիտելիքների առանձնահատկություններին անդրադարձել են նորական-տականության Բադենյան դպրոցի ներկայացուցիչները: Այսպես, Հ. Ռիկերտը, հասկացությունների ձևավորման մակարդակում առաջընթաց բնագիտական և պատմական գիտելիքները, բացահայտել է պատմական գիտելիքի որոշ յուրահատկություններ: Կարծում եմ, որ եթե վարկածի մակարդակում առաջերև բնագիտական և հասարակական-հումանիտար գիտելիքները, ապա կբացահայտվեն գիտության մեթոդաբանության տեսանկյունից հումանիտար գիտելիքի նոր, հետաքրքիր օրինաչափություններ: Մասնավորապես, խոսքը վարկածի հավաստիության ընդունման չափանիշների բացահայտման մասին է¹:

Գիտության փիլիսոփայության և մեթոդաբանության համար առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում պատմական վարկածների առանձնահատկությունների պարզաբանումը: Մեթոդաբանական գրականության մեջ վարկած գիտելիքի ձևը քննարկելիս հիմնականում նկատի են առնվում բնագիտական վարկածները, որոնց հիմնական տարբերությունը պատմական վարկածներից այն է, որ դրանց գիտափորձի պայմանները, հիմքերը վերարտադրելի են: Այսինքն՝ ցանկացած չափով և անգամներ կարելի է վերարտադրել այդ կարգի վարկածների հիմքերը, ստուգել դրանք, ապա դրանց հիման վրա ճշգրտել հին վարկածները և առաջադրել նորերը: Ի տարբերություն այս կարգի վարկածների՝ սոցիալ-հումանիտար բնագավառը և, առանձնապես, պատմական գիտելիքի ոլորտը զրկված են այդ հնարավորությունից: Պատմական իրողությունները, հատկապես սոցիալական պատմությանը վերաբերող իրադարձությունները, հիմնականում

¹ Տե՛ս Հ. Ա. Գևորգյան, Հիպոթեզը և նրա դերը գիտության մեջ, Եր., 1959, Գ. Ա. Բրուտյան, Տրամաբանության դասընթաց, Եր., 1987, Գ. Ի. Рузавин, Методы научного исследования, М., 1974, Л. Б. Баженов, Строение и функции естественнонаучной теории, М., 1978, И. П. Меркулов, Гипотетико-дедуктивная модель и развитие научного знания, М., 1980.

հնարավոր չէ վերականգնել, վերստեղծել այնպես, ինչպես դրանք եղել են: Ինչպես ասում են, սոցիալ-հումանիտար ոլորտի օբյեկտները, երևույթները հիմնականում յուրատեսակ, ունիկալ են: Սակայն չպետք է մոռանալ, որ բնության մեջ նույնպես կան չկրկնվող, առանձնահատուկ երևույթներ: Ստորև կփորձենք պատմական մի վարկածի առաջադրման ու լուծման պատմության օրինակով անդրադառնալ այն վարկածների հավաստիության յուրահատկություններին, ընդունման չափանիշներին, որոնք վերաբերում են ունիկալ երևույթներին: Այն երևույթներին, որոնք հնարավոր չէ գիտափորձի օգնությամբ վերարտադրել, վերստեղծել: Ծանոթանանք հայոց պատմական գանձերից մեկի՝ «Աշխարհացոյցի» և Մովսես Խորենացուն նրա հեղինակը ճանաչելու պատմության հետ: Հիմնահարցը հետևյալն է. ո՞վ է գրել «Աշխարհացոյցը», ո՞ր թվականին: Հարցի պատմությունը հատվածաբար կշարադրենք ըստ անվանի պատմաբան, ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը» գրքի²:

Խնդիրը, իհարկե, պատմաբանին վերաբերվող իրողություն է: Սակայն եթե նույն պրոբլեմը դիտարկում ենք գիտության փիլիսոփայության ու մեթոդաբանության տեսանկյունից, ապա հարց է ծագում. ինչպե՞ս է պատմական գիտելիքում առաջադրվում վարկածը, ապա քննարկվելով դառնում ընդունելի, համընդհանրական գիտական հանրության և հանրության կողմից առհասարակ: Այսինքն՝ մենք գործ ունենք գիտության փիլիսոփայության, մեթոդաբանության համար հետաքրքրական հիմնահարցի առաջադրումից մինչև գիտելիքի ընդունման չափանիշների բացահայտման հետ:

Հայտնի է, որ «Աշխարհացոյցի» առաջին հինգ հրատարակությունները լույս են տեսել XVII և XVIII դարերում և, համաձայն ավանդական վերնագրի, համարվել են Մովսես Խորենացու աշխատությունը (էջ 27):

Այս կարծիքը երկար ժամանակ եղել է միակ ընդունվածը: Սակայն 18-րդ դարավերջից սկսած գրականության մեջ կասկած առաջացավ, և աստիճանաբար մուտք գործեց մի նոր տեսակետ, որ այս աշխատությունն անկարելի է վերագրել հինգերորդ դարի մատենագիր Մովսես Խորենացուն (տե՛ս նույն տեղը):

Ահա և պատմական հիմնահարցը, արդյոք «Աշխարհացոյց» աշխատության հեղինակը Մովսես Խորենացի՞ն է, թե՞ ոչ: Եթե ոչ Խորենացին, ապա՝ ով:

Ի՞նչ հիմքեր են ունեցել հետազոտողները այսպիսի հարցադրման համար: Հիմքերը, իհարկե, «Աշխարհացոյց» աշխատության բազմաթիվ հրատարակություններն են: Նրանցում տեղ գտած հակասությունները, անախրոնիզմները: Փաստն այս է. եթե Մովսես Խորենացին V դարի հեղինակ է, և «Աշխարհացոյցը» նրա աշխատությունն է, ապա այդ աշխատությունում պետք է տեղ գտնեին այն փաստերը, տեղանունները, որոնք հայտնի են եղել մինչև այդ: Սա ակնհայտ է: Բայց ահա, 1789 թ. ֆրանսիացի գիտնական Մենտ Կրուան նկատում է, որ «Աշխարհացոյցում» հիշատակված Բասրա քաղաքը հիմնվել է Օմար Խալիֆի հրամանով Հիջրայի 14 թվականին, այսինքն՝ Բրիտոսից հետո 635 թվականին: Հետևաբար, եզրակացրել է

² Տե՛ս **Հ. Մանանդյան**, Խորենացու առեղծվածի լուծումը, Եր., 1934 (այսուհետև տեքստում կնշվի միայն էջը):

Մենտ Կրուան, աշխարհագրական այս անվանման հեղինակը ոչ մի դեպքում չէր կարող լինել, ինչպես մինչև այդ ընդունել են, Մովսես Խորենացին, որն ապրել է V դարում (տե՛ս նույն տեղը): Նրա կարծիքով, «Աշխարհացոյցը» կարող էր կազմված լինել միայն VII դարի սկզբներին, երբ Բաբրան գտնվել է ծաղկուն վիճակում: Մենտ-Կրուայի առաջադրած վարկածի հիմքը «Աշխարհացոյցում» նկատված հակասող փաստն է կամ, ինչպես ստորև կտեսնենք, փաստերը, որոնց հիման վրա տարբեր հեղինակներ եզրակացրել են, վարկածներ առաջադրել, որ «Աշխարհացոյցը» գրվել է ավելի ուշ շրջանում:

Հիմնահարցը հետևյալն է. եթե Մովսես Խորենացին հինգերորդ դարի հեղինակ է, ապա «Աշխարհացոյցը» ինքը չի գրել, իսկ եթե ինքն է գրել, ապա նա ավելի ուշ շրջանում ապրած հեղինակ է: Այդպիսի մի վարկածի հեղինակ է Մեն Մարտենը, որն «Աշխարհացոյցի» իր հրատարակության և ֆրանսերեն թարգմանության սկզբում զետեղել էր ընդարձակ մի առաջաբան, որի մեջ «Աշխարհացոյցի» հորինման ժամանակը նա ենթադրում էր իններորդ դարի վերջը կամ տասներորդ դարի կեսը (մոտավորապես 950 թ.) (էջ 28): Վարկածը հիմնավորող հիմքերից, օրինակներից մեկն այսպիսին է. որպես Գալլիայի բնակիչներ «Աշխարհացոյցի» մեջ հիշատակված են ֆրանկները, որոնք անվանված են «հզոր ազգ», իսկ Մեն Մարտենի կարծիքով, հինգերորդ դարում ֆրանկները դեռևս հզոր ազգ չէին, և նրանց անունը դժվար թե հայտնի լիներ Խորենացուն: Բացի այդ՝ ֆրանկների բնակության տեղն այդ ժամանակ գլխավորապես Գերմանիան էր և ոչ Գալլիան (էջ 29):

Հետագայում Մեն Մարտենի թե՛ առանձին դատողությունները և թե՛ ընդհանուր եզրակացությունն ամենախիստ քննադատության ենթարկվեցին Վենետիկի Մխիթարյանների կողմից, որոնք շարունակում էին պնդել, որ «Աշխարհացոյցը» Խորենացու աշխատությունն է և գրված է հինգերորդ դարում: Հակաճառելով Մեն Մարտենին՝ Ա. Ինժիճյանը փորձել է իր «Հնախօսութեան» մեջ ապացուցել, որ Մեն Մարտենի մատնանշած օտարոտի խորթությունները մեծ մասամբ Խորենացու գրածը չեն և չկան «Աշխարհացոյցի» ընտիր ձեռագրերում, իսկ մի քանիսը սխալ են մեկնված Մեն Մարտենի առաջաբանում: Այս վեճը, Հ. Մանանդյանի կարծիքով, ունեցավ այն դրական արդյունքը, որ Վենետիկի Մխիթարյանները, նկատի ունենալով Մեն Մարտենի հրատարակած բնագրի ընդմիջարկություններն ու աղճատումները, վեց ձեռագրի բաղդատությամբ տվեցին «Աշխարհացոյցի» քննական մի նոր հրատարակություն, որը Խորենացուն վերագրված մյուս երկերի հետ միասին տպագրված է Վենետիկում 1843 թ.: Սակայն քննական այս հրատարակությունից երևաց, որ Մեն Մարտենի մատնանշած աշխարհագրական մի քանի անունները հանդիպում են համառոտ այս խմբագրության բոլոր ձեռագրերում: Այստեղից Հ. Մանանդյանը եզրակացնում է, որ Մեն Մարտենի հիմնական եզրակացությունը՝ թե «Աշխարհացոյցը» գրված պետք է լինի ոչ թե հինգերորդ դարում, այլ շատ ավելի ուշ՝ միանգամայն հավանական է ու իրավացի (էջ 31):

Ինչպես նկատելի է, տվյալ եզրակացության կամ վարկածի հիմքն այն է, որ «Աշխարհացոյցի» բոլոր ձեռագրերում հանդիպում են ընդհանրություններ, որոնք հակասության մեջ են գտնվում նախնական ենթադրության հետ: Վերևում մենք արդեն այդպիսի հակասական օրինակներ բերել ենք:

Պատմական այս գիտական բանավեճը ունեցել է իր շարունակությունը: Պատմաբան Գուտշմիտը և աշխարհագիր Կիպերտը 1873թ. իրենց զեկույցում ենթադրել են, որ «Աշխարհացոյցը» Խորենացու աշխատությունն է՝ գրված հինգերորդ դարում: Կիպերտի կարծիքով, «Աշխարհացոյցը» կարելի է վերագրել Խորենացուն՝ բացառությամբ որոշ հատվածների, և մի քանի աննշան հավելվածների (էջ 32):

Հետագայում Ք. Պատկանյանը, ընդունելով Սեն Մարտենի հիմնական եզրակացությունը, որ «Աշխարհացոյցը» չի կարող լինել Խորենացու աշխատությունը, համաձայն չի եղել նրա այն կարծիքի հետ, որ իբր «Աշխարհացոյցը» գրված է իններորդ դարի կեսերին: Որպես նոր ապացույց, որ «Աշխարհացոյցը» Խորենացու հեղինակածը չէ, Պատկանյանը նոր դատողություններ է անում վեցերորդ դարի մետենագիր Կոնստանդին-Կոսմոս Հնդկացու մասին, որից քաղվածքներ է արել «Աշխարհացոյցի» հայ հեղինակը: Պատկանյանի կարծիքով, «Աշխարհացոյցը» լեզվաոճական առումով և ոչ մի նմանություն չունի Խորենացու աշխատությունների լեզվական առանձնահատկությունների հետ: Նա «Աշխարհացոյցը» համարում է յոթերորդ դարի առաջին կեսին գրված գործ և համոզված է, որ հենց այդ ժամանակաշրջանի համար բնական ու հասկանալի են դառնում կասկածահարույց այն փաստերը, որոնք հիշված են Սեն Մարտենի գրքում և քննության են առնված ռուսերեն իր առաջաբանում: Ավելին՝ կարծիք հայտնելով, որ «Աշխարհացոյցի» թարգմանման և հորինման համար անհրաժեշտ էր իմանալ և՛ հունարեն, և՛ մաթեմատիկա, եզրակացրել է, որ նրա հեղինակը Անանիա Շիրակացին է, որը և՛ հունարեն մատենագիր է, և՛ հայտնի մաթեմատիկոս (էջ 33):

Հետագայում բանասերներից շատերը, հիմնվելով Պատկանյանի եզրակացության վրա, «Աշխարհացոյցի» հեղինակ համարել են Անանիա Շիրակացուն:

Գուտշմիտը Խորենացու «Պատմություն Հայոցը» և «Աշխարհացոյցը» համարել է միևնույն հեղինակի և յոթերորդ դարի գործ: Իսկ Խալաթյանը ենթադրել է, որ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցը» աղբյուր է ծառայել Խորենացու «Պատմություն Հայոցի» համար: Հ. Մանանդյանը, հատված առ հատված, մանրամասն ուսումնասիրելով «Աշխարհացոյցի» և «Պատմություն Հայոցի» նմանություններն ու տարբերությունները, ոճը, բազմաթիվ դարձվածքները, մատենագրելու բնորոշ ձևը, բառամթերքը, համեմատելով առանձնահատուկ բառերը, հանգել է այն եզրակացության, որ «Աշխարհացոյցի» հեղինակը Մովսես Խորենացին է և Վենետիկի Մխիթարյանները այդ հարցում կատարելապես իրավացի են (էջ 74): Եվ որ Խորենացին ապրել է իններորդ դարում (էջ 46):

Մասնավորապես, նա որպես իր վարկածի հիմնավորման միջոց մատնանշում է «Աշխարհացոյցի» համառոտ խմբագրության բոլոր ձեռագրերում արաբական բառերի առկայությունը:

Ավելի ուշ Ստ. Մալխասյանցն իր «Խորենացու առեղծվածի շուրջը» աշխատությամբ հակադրվում է Հ. Մանանդյանի փաստարկներին: Նա մանրամասն վերլուծել է դրանք և ցույց տվել, որ Մովսես Խորենացին «Պատմություն Հայոցի» հեղինակն է և այդ աշխատությունը գրել է հինգերորդ դարում: Այդ նույնը Ստ. Մալխասյանցը հիմնավորել է նաև «Աշխար-

հացոյցի» կապակցությամբ³: Հետաքրքրական է պատմաբան Բ. Հարությունյանի մոտեցումը: Նա գրում է. «Սկզբնապես մենք ևս կանգնած էինք քաղաքացիություն ստացած այն տեսակետների վրա, որ «Աշխարհացոյցը» VII դարի ստեղծագործություն է, պատկանում է Անանիա Շիրակացու գրչին, իսկ ըստ աշխարհների վարչական բաժանումը անմիջականորեն կապվում է Մավրիկիոս կայսեր վարչական վերակառուցումների հետ: Աստիճանաբար մեր պատկերացումները խարխլվեցին, իսկ այնուհետև փաստական նյութի նոր իմաստավորումը մեզ հանգեցրեց այն մտքին, որ աշխարհները կամ նահանգները որպես վարչական միավորներ ծնունդ են առել I դարում, ամենայն հավանականությամբ, Տրդատ Ա թագավորի գահակալության շրջանում»⁴: Այնուհետև նա եզրակացրել է. «Մանրակրկիտ պատմա-աշխարհագրական և բանասիրական քննությունը մեզ բերեց այն եզրակացության, որ «Աշխարհացոյցը» գրվել է V դարում և հեղինակը, մեր կարծիքով, Մովսես Խորենացին՝ հանճարեղ Պատմահայրը, տուրք տալով իր ժամանակների վարչա-քաղաքական որոշ փոփոխություններին, վերջիններս մոծել է «Աշխարհացոյցի» մեջ, որով և Մեծ Հայքը մեզ է ներկայանում արդեն դասական դարձած իր 15 աշխարհներով»⁵:

Հարց է առաջանում, ինչո՞վ է պայմանավորված նույն խնդրի, հիմնահարցի նկատմամբ վարկածների այսպիսի առատությունը, բազմազանությունը: Եթե նշված հիմնահարցը դասական էմպիրիկ բնագիտության խնդիր լիներ, ապա մասնագետները գիտափորձերի միջոցով կվերարտադրեին ուսումնասիրվող խնդրի նախնական վիճակը, ընդ որում՝ բազմաթիվ անգամներ, վեր կհանվեին նրա հիմքերը, կստուգվեին, կառաջադրվեին վարկածներ, կհիմնավորվեին այդ վարկածները, կճշգրտվեին և, ի վերջո, բավարար հիմքերի, հիմնավորվածության, համոզականության առկայության պայմաններում այն կհամարվեր հավաստի, ընդունելի գիտելիք: Դիշտ է, այդ դեպքում ևս հնարավոր են բազմաթիվ վարկածներ, բայց դրանց թիվը անհամեմատ փոքր է: Այլ է վիճակը պատմական գիտելիքում, որտեղ մենք գործ ունենք անցյալի, անվերարտադրելի, ունիկալ գիտելիքի հետ: Բնական է, որ նմանատիպ վարկածների հիմքերը վերարտադրելի, անմիջականորեն ստուգելի չեն: Մենք այդ հիմքերին կարող ենք հասնել միջնորդավորված եղանակով: Օրինակ՝ «Աշխարհացոյցի» կամ «Պատմություն Հայոցի» դեպքում մեզ հասած օրինակների միջոցով, որոնք բնագրեր չեն: Դրանք տարբեր ժամանակներում բազմաթիվ անգամներ ազատ խմբագրվել և արտագրվել են: Այդ պատճառով դրանցում առկա են բազմաթիվ պատմական շերտեր, հակասություններ, անախրոնիզմներ: Նույնն է վիճակը Մովսես Խորենացու ապրած ժամանակաշրջանի հարցը որոշելիս: Մենք դրա մասին կարող ենք կռահել միայն թուցիկ հատվածների միջոցով: Ուստի հետազոտողների շրջանում վարկածները շատ են: Սակայն, ինչպես ցույց է տալիս նշված հիմնահարցերի պատմության քննումը, ի վերջո մասնագետները հանգել են մեկ ընդունելի տեսակետի: Ո՞րն է պատճառը:

³ Տե՛ս **Ստ. Մալխասյանց**, Խորենացու առեղծվածի շուրջը, Եր., 1940:

⁴ **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», Եր., 2001, էջ 51:

⁵ Նույն տեղում, էջ 52:

Մեր կարծիքով, «Աշխարհացոյցի», Խորենացու «Պատմություն Հայոցի» և Խորենացու ժամանակաշրջանի քննողներից յուրաքանչյուրը հարցին մոտեցել է որոշակի տեսանկյունից: Եվ ըստ այդմ բացահայտվել են տարբեր հիմքեր, առաջադրվել են տարբեր վարկածներ: Ժամանակի ընթացքում այդ խնդիրները մանրակրկիտ ու բազմակողմանի քննվել են: Հետազոտվել, պարզվել են նշված աշխատությունների նմանություններն ու տարբերությունները, ոճը, դարձվածքները, մատենագրելու ձևը, բառամթերքը, դրանց տարբեր շերտերը և այլն: Ի վերջո, մասնագետները, կարծես սպառնելով փաստարկները, նոր փաստերի բացահայտումը, հանգել են դրանց ստույգության, միանշանակության, անհակասականության, ամբողջականության, լրիվության, ամփոփության, կանոնավորության, կարելի է ասել՝ բնականության մի որոշակի ըմբռնման: Ե՛վ հայաստանցի պատմաբանների, և՛ բանասերների համար ընդունելի է դարձել այն վարկածը, որ «Աշխարհացոյցը» և «Պատմություն Հայոցը» միևնույն հեղինակի՝ հինգերորդ դարում ապրած Մովսես Խորենացու աշխատություններն են: Այս տեսակետը, ինչպես ասել ենք, բավականին երկար ժամանակ, ավելի քան հազար տարի, տիրապետող է եղել հայ պատմագրության մեջ: Ուստի հարց է առաջանում՝ արժե՞ր այդքան ջանքեր ու եռանդ վատնել, երկար ժամանակ քննել ու քննադատել և ի վերջո հանգել այն տեսակետին, ինչը արդեն ընդունված է եղել գրականության մեջ: Մեր կարծիքով, մի բան է, երբ գիտելիքն ընդունելի է լինում հեղինակության շնորհիվ, այլ բան է, երբ վարկածը ընդունելի է դառնում գիտական հասարակայնության և, առհասարակ, հասարակայնության կողմից նրա հիմքերի ուղղակի կամ անուղղակի, բազմակողմանի քննարկումների, ստուգումների, դրանց սպառիչ, բավարար լինելը պարզաբանելու շնորհիվ: Այդ դեպքում գիտելիքը դառնում է ավելի համոզիչ:

Կարելի է արձանագրել, որ XVIII դարի վերջից մեր պատմագրության մեջ ներթափանցած քննադատական ոգին անգնահատելի դեր է կատարել հայ պատմագրության, նրա մեթոդաբանության զարգացման, ճշգրտման մարզում:

Ասենք, որ պատմական տարբեր շրջանները ներկայացնող դեպքերը, երևույթները, իրադարձությունները կարող են ներկայացվել տարբեր հավանականություն ունեցող վարկածների միջոցով: Պատմական նոր շրջանները ներկայացնող վարկածների հավաստի լինելու աստիճանը ավելի բարձր է, քանի որ այդ իրադարձությունների վերաբերյալ փաստերը ավելի շատ են ու ամբողջական: Բացի այդ՝ նշված շրջանները ուսումնասիրող մասնագետների համար իրենց մոտ ժամանակաշրջանի դեպքերը ավելի հասկանալի են և դրանք զգալու ու դրանց մեջ ներթափանցելու հնարավորությունները ավելի մեծ են: Ուրեմն հավաստի պատմություն ունենալու համար պետք է ունենանք հնարավորինս ստույգ ու բազմազան փաստեր, դրանց ազատ տարաբնույթ քննարկումներ ու մեկնաբանություններ: Դրանից շահում է ոչ միայն պատմական գիտությունը, այլև հասարակությունը և ազգը: Չէ՞ որ պատմությունը կարծրացած, ամրագրված մշակույթ է, հասարակական-քաղաքական փորձ, հոգեբանություն: Եվ մենք պետք է առաջ շարժվենք մեր փորձը քննադատաբար յուրացնելու և դրանից դասեր քաղելու ճանապարհով:

Պատմական վարկածների հավաստիության ընդունման չափանիշների մասին

Այդ առումով կարևոր է պատմական գիտելիքի ընդունման, հավաստիության, ճշմարտության չափանիշների պարզաբանման հարցը: Բնագիտական գիտելիքի այդպիսի հետազոտություններ կան: Մենք ևս զբաղվել ենք այդ հարցերով և համակարգել, առանձնացրել ենք այսպիսի չափանիշներ. տրամաբանական, կառուցվածքային հիմքեր, էմպիրիկ հիմնավորվածություն, տեսական հիմնավորվածություն, պատմական հիմնավորվածություն, պրագմատիկական հիմնավորվածություն: Թեև մեր առանձին հոդվածներում անդրադարձել ենք այս չափանիշներին, այնուհանդերձ հակիրճ պարզաբանենք, թե ինչ նկատի ունենք⁶:

Գիտական գիտելիքի ընդունելի, ճանաչելի լինելու, հավաստիության, գիտական ճշմարտության տրամաբանական հիմքեր ասելով հասկանում ենք գիտելիքի միանշանակությունը, ճշգրտությունը, անհակասականությունը, շարադրման հետևողականությունը:

Կառուցվածքային հիմքեր ասելով նկատի ունենք գիտելիքին ներկայացվող համակարգայնության, ամբողջականության, որոշակիության, լրիվության, ինքնաբավության, ավարտվածության պահանջները:

Էմպիրիկ հիմնավորվածություն ասելով հասկանում ենք փիլիսոփայական գրականության մեջ լայնորեն քննարկված վերիֆիկացման և ֆալսիֆիկացման սկզբունքները:

Տեսական հիմնավորվածություն ասելով հասկանում ենք այն, որ գիտական գիտելիքի յուրաքանչյուր միավոր պետք է հնարավորինս համաձայնության, ներդաշնակության մեջ գտնվի գիտելիքի ներքին կառուցվածքի, տվյալ ժամանակաշրջանի աշխարհի գիտական պատկերի, հարացույցի, աշխարհայացքի հետ: Այս պահանջը, իհարկե, հարաբերական է: Գիտական գիտելիքները պետք է գտնվեն ոչ միայն ներքին, կառուցվածքային կայունության, այլև դինամիկայի, շարժման և փոփոխման մեջ:

Պատմական հիմնավորվածությամբ ենթադրվում է, որ ընդունված գիտելիքի ձևերը իրենց հիմքերն ունեն նախորդ գիտելիքներում, ընդ որում՝ և՛ կումուլյատիվ, և՛ ոչ կումուլյատիվ տեսքով:

Պրագմատիկական հիմնավորմամբ ենթադրվում է, որ ընդունելի, հավաստի, ճշմարիտ են այն գիտական գիտելիքները, որոնք ունեն բացատրման, կանխատեսման, կիրառման ավելի մեծ ինֆորմատիվ կարողություններ, ուժ, հզորություն:

Այս չափանիշներին կարելի է ավելացնել գիտական գիտելիքին ներկայացվող պարզության պահանջը: Այս պահանջի հիմքերը տանում են

⁶ Տե՛ս **А. С. Казарян**, *Межтеоретические отношения и системность науки*, Ер., 1978, **Ս. Ս. Ղազարյան**, Գիտական գիտելիքի համոզականության չափանիշները, ԲԵՀ, թիվ 3, Եր., 1991, **նույնի՝** Գիտական ճշմարտության մի ըմբռնման մասին, ԲԵՀ, թիվ 2, Եր., 1997, **նույնի՝** Գիտական գիտելիքի աճի և ճշմարտության Կ. Պոպերի ուսմունքը, ԲԵՀ, թիվ 3, Եր., 2002, **նույնի՝** Մովսես Խորենացու «Պատմություն հայոց» աշխատության մեթոդաբանական առանձնահատկությունները, ԲԵՀ, թիվ 3, Եր., 2007:

Ուիլյամ Օկլամ: Ժամանակակից առաջադրողները հենվում են պատմական մի օրինակի վրա⁷: Այն հայտնի է որպես մեր մոլորակային համակարգի մասին Պտղոմեոսի և Կոպեռնիկոսի առաջադրած վարկածների մրցակցության հարց, որոնցից ի վերջո հաղթել է Կոպեռնիկոսի արեգակակենտրոն վարկածը: Մասնագետները այդ վարկածի ընտրության հարցում վճռական գործոնը համարել են այն, որ Պտղոմեոսի «աշխարհի երկրակենտրոն համակարգը» ավելի բարդ վարկած է, քան Կոպեռնիկոսի «տիեզերքի արևակենտրոն համակարգը»: Գրականության մեջ տերմինը օգտագործվում է տարբեր իմաստներով: Սուբյեկտիվ իմաստով պարզություն ասելով հասկանում են ծանոթը, սովորականը, անմիջական փորձի և առողջ բանականության հետ կապված իրողությունը, որում բացակայում է բարդ մաթեմատիկական ապարատը: Մեթոդաբանական տեսակետից մի վարկածը ավելի պարզ է համարվում մյուսից, եթե այն պարունակում է ավելի քիչ քանակով նախադրյալներ, քան մյուսը: Ընդ որում, ավելի քիչ նախադրյալներ ունեցող վարկածը ավելի խոր և ընդհանրական բովանդակություն ունի, բացատրում է ավելի մեծ թվով հետևանքներ: Այսպես, ձգողության Նյուտոնի ունիվերսալ վարկածը ավելի պարզ ու ընդհանրական է Գալիլեյի վարկածի համեմատ, որովհետև այն ավելի քիչ ու համակարգված նախադրյալներ ունի: Մեր կարծիքով, գիտական գիտելիքի պարզության պահանջը անմիջականորեն կապված է նաև գիտելիքի տեսական ու էմպիրիկ ստուգելիության, հիմնավորումների հետ: Որքան ավելի թափանցիկ ու խիստ են գիտական գիտելիքների էմպիրիկ ու տեսական ստուգման ու հիմնավորման միջոցները, ձևերը, այնքան ավելի ընդունելի են այդ գիտելիքները:

Մեր կարծիքով, պատմական վարկածների հավաստի, ճշմարտացի, ընդունելի լինելու դեպքում թեև ընդհանուր առմամբ պահպանվում են այն նույն չափանիշները, որոնք արտածվել էին բնագիտական վարկածների հավաստի, ճշմարտացի, ընդունելի լինելու կապակցությամբ, այդուամենայնիվ առկա են որոշ տարբերություններ, որոնք կապված են պատմաբանի կողմից ուսումնասիրվող օբյեկտների հետ: Դրանք փաստաթղթերով արձանագրված, պատմիչների ու պատմաբանների կողմից շարադրված փաստերի, դեպքերի, պատմական կերպարների, անձնավորությունների գուցե նույնիսկ եզակի արտացոլումներ են: Եթե նույնիսկ ունենայինք պատմաբանին հետաքրքրող ժամանակաշրջանի «լուսանկարչական պատկերները»՝ իրենց բոլոր մանրամասներով, այդուհանդերձ դրանք արված կլինեին որոշակի տեսանկյունից, որոշակի նկատառումներով: Պատմաբանների, առավել ևս պատմիչների շարադրած պատմական գործերը հենց այդ բնույթի են: Դրանք կրում են և՛ ժամանակի կնիքը, և՛ անձնական փորձն ու նախընտրությունները: Այսպես, պնդել, թե Խորենացին իր աշխատությունը գրել է մի ժամանակաշրջանում, սակայն ինչ-ինչ նկատառումներով վերագրել այլ ժամանակաշրջանի, այսինքն՝ մտադրված կեղծել է իր աշխատությունների գրման ժամանակը, խիստ անհավանական վարկած է, մանավանդ եթե նկատի ունենանք աշխատությունները գրելու ժամանակաշրջանը՝

⁷ Տե՛ս **А. С. Манасян**, *Методологические принципы объективности научного знания и единство науки*, Ер., 2002:

միջնադարը, Խորենացու բարեպաշտ հավատացյալ, համարձակ, ճշմարտախոս լինելու փաստը: Պատահական չէ, որ ժամանակակից հայաստանցի մասնագետները խորապես զգում են այդ վարկածի մտացածին լինելը: Ոչ թե այն պատճառով, որ ուզում են իրենց հայրենակցին այլ լույսի տակ ներկայացնել, որը գիտականության տեսանկյունից անընդունելի է, այլ ծանրութեթե են արել բոլոր հնարավոր փաստարկները, ճշտել են Խորենացու ժամանակաշրջանն ու աշխատությունների ոճն ու ամբողջական բովանդակությունը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ թեև պատմական իրողությունների, էմպիրիկ հիմքերի, փաստերի ճշգրիտ, ստույգ, որակով, համակողմանի, սպառիչ, անկողմնակալ, ամբողջական ուսումնասիրությունն ու ըմբռնումը շատ կարևոր են պատմական վարկածների հավաստի, ճշմարտացի, ընդունելի, ճանաչելի գնահատելու համար, այնուամենայնիվ պատմական, առանձնապես հասարակական պատմության կողմից դիտարկվող հասարակական դեպքերի, երևույթների, անձնավորությունների արագ փոփոխականության, առանձնահատկության, ինքնատիպության, անվերարտադրելիության պատճառով այդ կարգի վարկածների համար էական, գերակա դեր ունի արտաէմպիրիկական հիմքերի և հիմնավորման միջոցների ամբողջականությունը: Այդ թվում՝ պատմական աշխատությունները պարզ, նրբագեղ, գեղեցիկ, մատչելի, համամարդկային արժեքների, նորմերի, ստանդարտների, իդեալներին համապատասխան շարադրելը:

А. С. КАЗАРЯН — Особенности исторической гипотезы. — В статье рассматривается вопрос исторических изменений гипотезы, показываются ее особенности, на конкретном примере выявляются критерии достоверности этой гипотезы.